

2025

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔ

ՀՀ ք. Երևան , Արշակունյաց պողոտա հ. 28/26

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ՝
«ՅԱՌԴ» ՍՊԸ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com



ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔ
ՀՀ ք. Երևան , Արշակունյաց պողոտա հ. 28/26

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՅԱՌԴ» ՍՊԸ

Ա. Բաղյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	5
1.2	Հապավումներ	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	6
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	6
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	10
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր.....</i>	10
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր.....</i>	11
1.5.3	<i>Ջրամատակարարում և ջրահեռացում.....</i>	14
1.5.4	<i>Օդափոխություն. Ջեռուցում.....</i>	15
1.5.5	<i>Էլ. մատակարարում.....</i>	16
1.5.6	<i>Գազամատակարարում.....</i>	19
1.5.7	<i>Էներգախնայողության միջոցառումներ.....</i>	19
1.5.8	<i>Կանաչապատման աշխատանքներ.....</i>	19
1.5.9	<i>Կանաչ տարածքի ռոտզման ջրապահանջի հաշվարկ.....</i>	20
1.5.10	<i>Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ.....</i>	21
1.5.11	<i>Գլխավոր հատակագիծ.....</i>	24
1.5.12	<i>Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց.....</i>	25
1.5.13	<i>Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ.....</i>	26
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ	28
2.1	Աշխատանքների կատարման սխեմա.....	29
	Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են	30
2.2	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը	31
2.3	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները	31
2.3.1	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....</i>	32
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	34
3.1	Ջրային ցանցը	34
3.2	Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը	34
3.3	Հիդրոերկրաբանական պայմանները	35
3.4	Կլիման	35
3.5	Օդային ավազան	38
3.6	Ջրային ռեսուրսներ	42
3.7	Հողերի նկարագիրը	43
3.8	Հողային ռեսուրսներ	43
3.9	Բուսական աշխարհ	43
3.10	Կենդանական աշխարհ	44

3.11	Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	45
3.12	Պատմամշակութային հուշարձաններ.....	45
3.13	Աղմուկ և թրթռում:.....	55
3.14	Թափոնների կառավարում	57
3.15	Աղմուկ և թրթռում:.....	59
3.16	Սոցիոլական գործոն	59
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	60
4.1	Ռիսկերի գնահատում	61
4.2	Արտանետումների աղբյուրները	61
4.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	62
4.3.1	<i>Մթնոլորտային օդ.....</i>	62
4.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	62
4.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	63
4.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....</i>	63
4.3.5	<i>Հակահրդեհային միջոցառումներ.....</i>	64
4.3.6	<i>Աղմուկ և թրթռում.....</i>	64
4.3.7	<i>Թափոնների կառավարում</i>	65
4.3.8	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում.....</i>	65
5.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	65
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	67
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	70
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	72
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	73

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող՝	«ՅԱՌԴ» ՍՊԸ
Իրավաբանական հասցե՝	ՀՀ ք. Երևան Իսահակյան փ. 242.
Նախատեսվող գործունեության հասցեն՝	ՀՀ ք. Երևան , Արշակունյաց պողոտա հ. 28/26
Նախնական գնահատման հայտի կազմող՝	Ա/Չ Արամ Գալոյան, հեռ. +374 99994222

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բնակելի բազմաֆունկցիոնալ շենք:

Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ ք. Երևան, Արշակունյաց պողոտա հ. 28/26 հասցեում:

Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Երևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության

մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ ք. Երևան , Արշակունյաց պողոտա հ. 28/26 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիր կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Մահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2023, ՀՕ-150-Ն) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրության փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երկու կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

ՀՀ ջրային օրենսգրք 2002թ. - Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենքներով և իրավական այլ ակտերով: *Ջրային հարաբերություններ*՝ ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների կամ դրանց մասի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.

«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,

«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշում:

10

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հողատարածքը ազատ է կառուցապատումից, ասֆալտապատ է, ծառաթփային բուսականություն չկա:

Նախատեսվող կառույցի հարևանությամբ են գտնվում հասարակական և բնակելի կառույցներ, մասնավորապես՝

- Բնակելի շենք, 9 հարկ – 22մ
- Ոչ բնակելի շենք, 1 հարկ – 10 մ
- Բնակելի շենք, 2 հարկ – 11 մ
- Ոչ բնակելի շենք, 1 հարկ – 7.5 մ
- Նոր նախատեսվող ճանապարհ – 15մ

Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձաններ հողատարածքի վրա բացակայում են, սակայն, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից կառուցապատողը կդադարեցնի աշխատանքները և դրա մասին անհապաղ կհայտնի լիազորված մարմին:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Ըստ իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, հետևաբար հողաբուսաշերտի պահպանման միջոցառումներ չի նախատեսվում:

1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

Նախագծվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքը գտնվում է Երևան, Շենգավիթ Արշակունյաց պողոտա 28/26 հողամասում: Աշխատանքային նախագիծը իրականացվել է 15.11.2024թ. Երևանի քաղաքապետի կողմից տրված N01/50-01-635-24 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա՝ 0,1832 հա (ըստ վկայական N 02112023-01-0300) մակերես ունեցող հողամասում:

Դեպի շենք մեքենաների և մարդկային հոսքերի մոտեցումը նախատեսված է տարածքին հարավից հարող ճանապարհից: Համաձայն գլխավոր հատակագծի կառուցապատումը զբաղեցնում է ընդհանուր հողամասի 54.2%-ը (993.26 մ2, որից 139,9 մ2 սալվածքներ և ճանապարհներ (ընդհանուր հողամասի 7.6%-ը)), կանաչապատումը՝ 45.8%-ը (839.17 մ2):

Բնակելի շենքը ունի 3 ստորգետնյա և 18 վերգետնյա հարկեր (ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 19 553.30մ²): Ստորգետնյա հարկերում տեղակայված է ավտոկայանատեղը, որ նախատեսված է ընդհանուր թվով 90 մեքենաների կայանման համար

(31՝ -3 ստորգետնյա հարկում (նիշ -10,60, 1637,19 մ2 կառուցապատման մակերես), (31՝ -2 ստորգետնյա հարկում (նիշ -7,30, 1637,19 մ2 կառուցապատման մակերես), 28՝ -1 ստորգետնյա հարկում (նիշ -4,00, 1637,19 մ2 կառուցապատման մակերես)): Առաջին վերգետնյա հարկը՝ $\pm 0,00$ նիշով հասարակական նշանակության է (ընդհանուր կառուցապատման մակերես՝ 853,37 մ²): Այս նիշով է նախատեսված նաև մուտքը դեպի շենքի աստիճանավանդակ: Երկրորդ վերգետնյա հարկը (ընդհանուր կառուցապատման մակերես՝ 853,37 մ²) նույնպես հասարակական նշանակության է՝ արտաքին աստիճաններից մոտեցման հնարավորությամբ: Սկսված 7,80 նիշից տեղակայված են թվով 16 բնակելի հարկերը (յուրաքանչյուր հարկի բարձրությունը 3,30 մ է: Երրորդից տասնչորսերորդ վերգետնյա հարկերում կա առավելագույնը 8 բնակարան (բնակելի հարկի կառուցապատման մակերես՝ 803,48 մ²), տասնհինգից տասնութերորդ վերգետնյա հարկերում՝ առավելագույնը 6 բնակարան: Այսպիսով շենքում հնարավոր առավելագույն բնակարանների թիվը 120 է:

Աստիճանավանդակի դռները հակահրդեհային են և ինքնափակվող:

Ամբողջ բակային ծածկույթի տակ նախատեսվում է հատուկ միջոցառումների կիրառում 0,9-1,0 ՄՊա ճնշմանը դիմակայելու, անհրաժեշտության դեպքում թույլ տալու հրշեջ մեքենաների և այլ ծանր տեխնիկայի կիրառումը տվյալ տարածքում:

Ավտոկայանատեղիում տեղակայված են հակահրդեհային ռեգերվուարները և պոմպակայանը: Ապահովված է հրդեհաշիջման համակարգով:

Բնակելի շենքի ավտոկայանատեղիի երեք հարկերը (-4,00 նիշ, -7.30 նիշ և -10.60) արտակարգ իրավիճակների ժամանակ կարող է ծառայել, որպես ապաստարան: Հարկերում առկա են սանհանգույցներ, ծխահեռացումը առանձնացված է, կա հնարավորություն սեղմ ժամկետներում ապահովել կացության համար անհրաժեշտ պարագաներով: Ինչպես նաև առկա հակահրդեհային բաքերը կարող են ապահովել ջրի պահանջը: Պարզագույն թաքստոցի (ապաստարանի) սխեման և բացատրագիրը ներկայացված են Ճ-54 էջում:

Կառույցի տանիքը նախատեսված է հարթ՝ կազմակերպված ներքին ջրահեռացմամբ, կոնստրուկցիաները՝ եփ-ից: Շենքում նախատեսված է շանթապաշտպանության համակարգ:

Շենքի արտաքին տեսքը և ճարտարապետական հորինվածքը հետագա խեղաթյուրումներից գերծ պահելու համար հովացման համակարգերի արտաքին բլոկները նախատեսվում է տեղադրել պատշգամբների կողային պատերին: Կառույցի երեսապատումը մտադրվում է իրականացնել բազալտե, տուֆե և տրավերտինե սալերով, կամ դրանց համապատասխան արտաքին տեսքով կերամոզրանիտե սալերով:—

Համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման նախագծվող օբյեկտը հանդիսանում է IV կատեգորիայի ռիսկայնության և ենթակա է պետական համալիր փորձաքննության: Նախագիծը մշակվել է ՀՀԾՆ IV-11.07.01.2008 (ՄՄՆ 3.02-05.2003), շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Բնակչության սակավաշարժ խմբերի համար նախատեսված են թեքահարթակներ:

Համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման նախագծվող օբյեկտը հանդիսանում է IV կատեգորիայի ռիսկայնության և ենթակա է պետական համալիր փորձաքննության:

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հողամասի մակերեսը	1832,00 Մ ²	
Կանաչապատման մակերեսը	839,17 Մ ²	45,8%
Կառուցապատման մակերեսը	853,37 Մ ²	46,6%
Անջրանցիկ մակերեսը	139,9 Մ ²	7,6%
Շենքի ընդհանուր շինարարական մակերեսը	19 553,30 Մ²	
Բնակարանների քանակը	120	
Ավտոկայանատեղերի քանակը	90	75,0%

Նախագծման ընթացքում կառուցապատողը առաջնորդվել է ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության եվ էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշմամբ:

Նախագիծը մշակված է համաձայն.

ՀՀՇՆ 30-01-2023 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՍՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

ՀՀՇՆ 31-01-2014 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ. ՄԱՍ1 .ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ

ՀՀՇՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 11.09.2017թ. ԹԻՎ 128-Ն ՀՐԱՄԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎԱՇԱՐԺՈՒՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

1.5.3 Ջրամատակարարում և ջրահեռացում

Ք.Երևան Շենգավիթ Արշակունյաց պողոտա 28/26 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի ջրագծի կառուցման, ջրաչափական հանգույցի տեղադրման, կոյուղու և հեղեղատարի կառուցման նաագիծը կազմված է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված ՎՋ 679 1203 տեխնիկական պայմանի հիման վրա:

Նախագծով նախատեսվում է՝

1. Տարածքում կառուցվելու է 18 հարկանի բազմաբնակարան շենք, որի համար նախատեսվում է տեղադրել DN50մ ջրաչափական հանգույց: Ջրաչափական հանգույցը տեղադրվում է Ե/բ կլոր հավաքովի էլեմենտներով՝ D15, H-15մ, ջրաչափական հորի մեջ: Մուտքագծի և ջրաչափի տրամագծի ընտրությունը կատարվել է հիմք քնդունելով տեխնիկական պայմանով տրված ջրի քանակը: Ջրագիծը միանում է Արշակունյաց պողոտայով անցնող DN400մ պողպատե ջրագծից: Միացման կետում նախատեսվում է կառուցել է Ե/Բ հոր՝ D=15,H=1.5, որի մեջ տեղադրվում է DN50մ սեպավոր փական: Նախատեսվում է կառուցել DN50մ, -1.0 ՄՊա L-76.0մ երկարությամբ ջրագիծ պոլիէթիլենե խողովակներով: Ջրագծում ճնշումը կազմում է 2.5 մթն., առավելագույն էլքի՝ Q-30 վրկ.դեպքում ճանապարհային կորուստը կազմում է 8.7մ: Միացման կետը 15մ ցածր է տարածքի նիշից, ջրաչափական հանգույցի մոտ ազատ ճնշումը կազմում է 1.68 մթն.: Շենքի նորմալ ջրամատակարարումը ապահովելու համար՝ ներքին ջրամատակարարման համակարգի նախագծով նախատեսվում է տեղադրել ինվերտորային պոմպեր, կամ նմանատիպ այլ պոմպեր: Պոմպերի տեխնիկական բնութագրերը և պոմպակառուցման հատակագիծը ներկայացված է:

Պոմպակայանը պետք է ունենա

. Շենքից առանձնացված կառույց սեփականության կայական (համապատասխանի նորմերով սահմանված իրական չափերին):

Պոմպերի նախագիծ (պարտադիր պահուստային պոմպի քանակը համաձայն նորմերի) հաստատված «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից :

• Պոմպի մոդել, QH: Շենքի հարկայնություն, բաժանորդների քանակ:

• Պոմպակայանի է հաշվիչ անհատական բաժանորդային քարտ, առանձին սնուցում համաձայն նորմերի (տեխնիկական պայման և սահման ազատման ԱԿՏ) համաձայնագիր անվանափոխության:

• Պոմպերի համակարգը պարտադիր նախատեսել ինվերտորային, կամ նման սպիտակ պոմպեր, էլքերին տվիչներով:

• Պոմպակայանում՝ լուսավորության, օդափոխության և ջրահեռասման համակարգ:

• Պոմպերի էլքերին հետադարձ փական և պոմպերի մուտքերին և էլքերին փական:

• Պոմպակայանում պոմպերի շրջանցող գիծ իր փականներով: Պոմպերի մուտքերին ցածր ճնշման թվային ռելեներ: • Պոմպերը սնուցող անհատական էլ. Մալուխների ավտոմատ անջատիչներ:

• Ջրամատակարարման համակարգը պետք է առանձնացված լինի հակահրդեհային համակարգից

• Անհրաժեշտ է պոմպակայանը անմիջականորեն միացված լինի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման ենթակա ջրային համակարգին, առանց միջանկյալ կարգավորող ջրամբարի առկայության

• Անհրաժեշտ է նախատեսել պոմպակայանի մուտքին համապատասխան շահագործման մուտքային ճանապարհ:

• Փաստացի P մուտք, Փաստացի P ելք:

Համաձայն տրված տեխնիկական պայմանի նախագծով նախատեսվում է տեղադրել հակահրդեհային հիդրանտ: Հիդրանտը տեղադրվում է գոյություն ունեցող $D=400(st)$ պողպատե խողովակի վրա, $D=1.5m.H-1.5m$, Ե/Բ հորի մեջ: Ջրագծի կառուցումից հետո կատարվում է փորձարկում, լվացում և ախտահանում, որից հետո կատարվում է ետլիցք ավազով:

Կառուցել IN-200մմ, 1-820մ, կենցաղային կոյուղագիծ Ի8 տիպի պոլիէթիլենե ակոսավոր խողովակներով: Նախագծվող կոյուղագիծը միանում է Արշակունյաց պողոտայով անցնող $D=1000մմ$ կոյուղատարին, միացման կետում կառուցվում է դիտահոր: Նախատեսվում է կառուցել թվով 3 հատ դիտահոր, $D=1.0m$, $H-1.18-2.99m$:

Նկատի ունենալով, որ նախագծվող կոյուղատարի և հեղեղատարի հետագծերը անցնում են միևնույն տարածքով և միևնույն ուղղությամբ, ուստի կոյուղատարը և հեղեղատարը անցկացվում է մեկ ընդհանուր խրամուղով: 3. Կառուցել DN-250մմ, L-84.0մ, հեղեղատար N8 տիպի պոլիէթիլենե ակոսավոր խողովակներով: Նախագծվող հեղեղատարը միանում է Արշակունյաց պողոտայով անցնող 1400մ՝ հեղեղատարին միացման կետում կառուցվում է դիտահոր: Նախատեսվում է կառուցել թվով 3 հատ դիտահոր, $D-1.0m$, $H-0.54-2.20m$:

Նկատի ունենալով, որ նախագծվող կոյուղատարի և հեղեղատարի հետագծերը անցնում են միևնույն տարածքով և միևնույն ուղղությամբ, ուստի կոյուղատարը և հեղեղատարը անցկացվում է մեկ ընդհանուր խրամուղով: Նկատի ունենալով, որ նախագծվող հեղեղատարի և կոյուղատարի հետագծերը անցնում են միևնույն տարածքով և միևնույն ուղղությամբ, ուստի հեղեղատարը և կոյուղատարը անցկացվում է մեկ ընդհանուր խրամուղով:

Կոյուղագծի և հեղեղատարի կառուցումից հետո կատարվում է փորձարկում, որից հետո կատարվում է ետլիցք ավազով: Տեղանքի գրունտների վերաբերյալ կատարվել է ինժեներակրթաբանական հետազոտություն:

1.5.4 Օդափոխություն. Ջեռուցում

Ք. Երևան, Շենգավիթ Արշակունյաց 28/26 բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի ջեռուցման և օդափոխության աշխատանքային նախագիծը իրականացված է համաձայն նախագծային առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի եվ գործող շինարարական նորմերի եվ կանոնների:

ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխություն եվ օդորակում»

ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն »

ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն»

Նախագիծը իրականացված է արտաքին օդի $t=-19^{\circ}C$ ձմեռային եվ $t=34.8^{\circ}C$ ամառային հաշվարկային ջերմաստիճանների հիման վրա: սենյակների ներսի օդի ջերմաստիճանները ը նդունված են համաձայն համապատասխան նորմերի:

Ջեռուցում-բնակելի մասում

Ջերմամատակարարումը իրականացվում է տանիքում նախագծվող կաթսայատնից: ջեռուցման համար ջերմատարը ջուրն է՝ $80-60^{\circ}C$ պարամետրերով:

Կաթսայատնից մատակարար խողովակագիծը հորանով իջնում է ներքել:

Յուրաքանչյուր հարկում նախատեսված է հաշվիչ հանգույցների պահարան:

Օդափոխություն-բնակելի մասի

Խոհանոցներից, սանհանգույցներից և լոգարաններից նախատեսված է օդափոխություն բնական եղանակով՝ օդատար հորաններով, որոնք բարձրանում են տանիքից վեր $h=1,50$ մ: նախատեսված է տեղական արտածում էլեկտրական սալօջախներից ցինկապատ թիթեղից պատրաստված օդատար հորաններով:

Հասարակական հարկերի ջեռուցումը եվ օդափոխությունը նախատեսված է կոնդիցիոներով՝ արտաքին և ներքին բլոկների օգնությամբ: Օդաքանակը հաշվարկված է ըստ հաճախորդների և աշխատողների քանակի:

Իրականացվում է “RETAK” ֆիրմայի (կամ համարժեք) կանալային օդամուղներով:

Կոնդիցիոների ներքին բլոկը, արտածման օդամուղը եվ օդատարները մոնտաժվում են առաստաղների տակ: ներածման եվ արտածման կարգավորվող ճաղավանդակները տեղադրվում են կախովի առաստաղների վրա:

Ավտոկայանատեղերում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման եվ արտածման համակարգեր: վերջիններիս սարքավերումները տեղադրվում են հարկերի առաստաղների տակ:

Շենքի բնակելի մասի միջանցքներից եվ ավտոկայանատեղերից իրականացվում է ծխահեռացում: ծխահեռացման ծխատարերը սեվ մետաղից են ոչ պակաս քան 1,0%1,20մմ հաստությամբ եվ մեկուսացվում են հրակայուն մեկուսիչներով:

Նախագծված են դիմհարման համակարգեր վերելակների հորաններում եվ աստիճանավանդակի նախասրահում:

Նախատեսված է նաեվ թարմ օդի մուտք բնակելի մասի միջանցքներ եվ ավտոկայանատեղեր ծխաքանակի 70 տոկոսի չափով:

Հակահրդեհային օդամուղերի գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից եվ հեռակառավարման վահանակից:

1.5.5 Էլ. մատակարարում

Քաղաք Երևան Շենգավիթ Վ/Շ Արշակունյաց պող. հ. 28/26 հասցեում կառուցվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի ներքին էլեկտրամատակարարման նախագիծը կատարված է ճարտարաշինարարական գծագրերի, տեխնիկական պայմանի, հարակից բաժինների առաջադրանքների, ինչպես նաև ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի հիման վրա:

Բնակելի շենքի էլեկտրամատակարարումը նախատեսված է կատարել բազմաֆունկցիոնալ շենքում կառուցվող տրանսֆորմատորային ենթակայանից, -4.00 նիշում գտնվող վահանային սենյակներից սնուցում են ստանում շենքի սպառիչները:

Ենթակայանից սնող 4 հատ 4 ջիղանոց մալուխները ներանցվում են վահանային սենյակ: Ավտոկայանի լիցքավորող սարքերը առանձնացված են և սնուցում են ստանում առանձին մալուխներով ենթակայանի 0.4կՎ սեկցիաներից:

Նախագծում կիրառված է հողանցման TN-S համակարգը:

Քառաջիղ սնող մալուխների հետ համատեղ ենթակայանից նախատեսվում է անցկացնել ընդհանուր հողանցման մագիստրալ :

Գլխավոր վահաններում կատարված բանվորական և պաշտպանիչ զրոնների մեկուսացումը ենթակա է խիստ պահպանման ցանցի ցանկացած կետում:

Տվյալ նախագծի ծավալներում ընդգրկված են՝

- շենքի ներքին ուժային և լուսավորության ցանց
- գլխավոր բաշխիչ վահանները
- հարկերում տեղադրված բաշխիչ և խմբային վահաններ
- բաժանորդային պահարանները՝ հաշվիչներով
- մագիստրալ գծերը՝ բաշխիչ վահաններից մինչև սպառիչներ
- բնակարանների խմբային վահանակները
- կաթսայատունը

Համալիրի պահանջվող հզորությունը կազմում է 867կՎտ/1020ԿՎԱ:

Բնակելի շենքի սպառիչները պատկանում են էլեկրամատակարարման հուսալիության 1-ին և 2-րդ կարգերին:

1-ին կարգին պատկանում են ծխահեռացման համակարգերը և կափույրները, հրդեհային ազդասարքերը, աստիճանավանդակների և միջանցքների անվտանգության և էվակուացիոն լուսավորությունը, վթարային լուսավորությունը, վերելակները, պոմպակայանը, կաթսայատունը, ավտոկայանատեղերը թաքստոցներով կապի սարքավորումները:

1-ին կարգի սպառիչների էլեկտրասնուցումը իրականացվում է առանձին բաշխիչ վահանից ABP-ի միջոցով, որը ապահովում է 1-ին կարգի սպառիչների էլեկտրամատակարարումը շենքի հոսանքազրկման դեպքում:

Մնացած սպառիչները պատկանում են էլեկրամատակարարման հուսալիության 2-րդ կարգին:

Շենքի ընդհանուր օգտագործման տարածքների (ավտոկայանատեղերի լուսավորությունը, ընդհանուր օդափոխությունը, պոմպակայանը և այլն) և հասարակական տարածքների էլեկտրաէներգիայի ծախսի հաշվառումն առանձնացված է:

Բնակարանային վահանակների սնուցումը կատարվում է 4,00 նիշում տեղադրված ACKYՅ 20 տեղանոց հաշվիչներով բաժանորդային պահարաններից՝ որոնք պարունակում են էլեկտրաէներգիայի ավտոմատացված ստուգում և հաշվառում:

Հաշվիչներից՝ հորանով անցկացվում են առանձին ռադիալ գծեր, իսկ հարկերում՝ տուփախողովակի միջով դեպի բնակարանների վահանակները նախատեսված է անցկացնել BBГНГ-LS (2x10) մմ մալուխ և ПБ10 հաղորդալար:

Բնակարանների միջանցքերում մոնտաժվում են խմբային վահանակներ, որոնցից կատարվում է խմբային գծերի մոնտաժումը թաքնված եղանակով:

Բնակարանների լուսավորության ղեկավարումը կատարվում է անջատիչների միջոցով, որոնք մոնտաժվում են դռան բռնակի կողմից հատակից 0,8մ վրա:

Սանհանգույցներում տեղադրվող վարդակը մոնտաժվում է հատակից 1,7մ բարձրության վրա, խոհանոցի աշխատասեղանի մոտ վարդակները մոնտաժվում են հատակից 1մ բարձրության վրա, էլ. սալիկի համար նախատեսված

վարդակը մոնտաժվում է 0,3մ բարձրության վրա, մահճակալի աջ և ձախ կողմում վարդակների մոնտաժման բարձրությունն է՝ 0.6մ հատակից, մնացած վարդակների մոնտաժման բարձրությունը կազմում է 0.3մ հատակից:

Սանհանգույցների և լոգարանի խմբային գծերի վրա տեղադրված է դիֆերենցիալ հոսանքներից ավտոմատ անջատիչ: Բնակարաններում կիրարկված են ПБ3 մակնիշի հաղորդալարեր՝ անցկացրած չայրվող ճկախողովակի միջով:

Հասարակական տարածքների լուսատուները ընտրված են լուսադիոդային: Լուսավորության ղեկավարումը կատարվում է տեղային անջատիչների միջոցով, որոնք մոնտաժվում են դռան բռնակի կողմից հատակից 0,8մ վրա:

Սանհանգույցների խմբային գծի վրա տեղադրված է դիֆերենցիալ հոսանքներից ավտոմատ անջատիչ : Սանհանգույցում տեղադրվող վարդակը մոնտաժվում է հատակից 1,7մ բարձրության վրա, աշխատասեղանների մոտ տեղակայված վարդակները մոնտաժվում են 0,3մ բարձրության վրա, մնացած վարդակների մոնտաժման բարձրությունը կազմում է 0.3մ հատակից:

Հասարակական տարածքներում նույնպես կիրառված են ПБ3 մակնիշի հաղորդալարեր՝ անցկացրած չայրվող ճկախողովակի միջով:

Բնակելի շենքի ստիճանավանդակների, բնակարանների և վերելակի նախամուտքերի լուսավորության ցանցը նախատեսված է ԱԼՎ1 վահանակից: Վահանակում մոնտաժված ավտոմատ անջատիչներից անցկացվում են ВВГнг- LS (3x4)մմ.քառ մագիստրալ մալուխներ, որոնցից ճյուղավորումը հարկերում կատարվում է ПБ 3(1x1,5)մմ² պղնձե հաղորդալարով:

Աստիճանավանդակների լուսավորության ղեկավարումը կատարվում է շարժման տվիչներով, իսկ մարտկոցներով ներսարքված էվակուացիոն լուսատուները միանում են հոսանքազրկման դեպքում:

Շենքի ընդհանուր մուտքերի լուսավորության ղեկավարումը իրականացվում է ավտոմատ ֆոտոռելի միջոցով:

Տանիքում նախատեսված ազդանշանային լուսավորության ղեկավարումը նույնպես նախատեսված է ֆոտոռելիից:

Ընդհանուր տարածքների լուսատուները ընտրված են լուսադիոդային:

Որպես գլխավոր հողանցման հաղորդաձող ծառայում է ԲՎ1 և ԲՎ6 բաշխիչ վահանների PE ձողերը, որին միանում են 0.4 սնող մալուխների PEN ջիղը, էլեկտրավահանայինի, պոմպակայանի, կիաթսայատան, վերելակի մեքենայական խուցերի ներքին կոնտուրները, շենք ներանցվող մետաղական ջրագծերը, մետաղական մալուխատարները, օդափոխության խողովակները շենքի կոնստրուկցիայի ամրանը, կրկնակի հողանցման կոնտուրը:

Համալիրի ամբողջ ցանցը նախագծված է եռալար (միաֆազ) կամ 5 լարանի (եռաֆազ):

Ըստ շանթապաշտպանության կարգի՝ կառույցը պատկանում է 3-րդ կարգի:

Հարթ տանիքի հիդրոմեկուսիչ շերտի տակով նախատեսված է անցկացնել 0,6մմ² Ա տրամագծի պողպատյա շանթընդունիչ ցանց, 12x12 ոչ ավելի քայլով:

Հանգույցները միացվում են եռակցումով:

Շանթընդունիչ ցանցը յուրաքանչյուր 25մ մեկ հողանցվում է :

Որպես հոսանքահան հաղորդաձող ընդունված է Ø8մմ² պողպատյա ձող, որը շանթընդունիչ ցանցից, շենքի արտաքին պատով՝ ամրակների տակ, իջնում է դեպի հողակցիչներ:

Նախագիծը մշակվել է համաձայն գործող նորմերի և կանոնների /ПУЭ, СНиП 31-110-2003, BCH 59-88, ՀՀՇՆ 22-03-2017/:

1.5.6 *Գազամատակարարում*

Համաձայն «Գազայրում Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների /կցված հավելվածների բաժնում/, բնակելի շենքի գազամատակարարումն $P=0.3$ ՄՊա ճնշման և $Q=310$ մ/ժ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել Երևան-2 ԳԲԿ-ն սնող Dպ-700 կողմնատար – գազատարից /:

1.5.7 *Էներգախնայողության միջոցառումներ*

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ /пеноплекс/:
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

1.5.8 *Կանաչապատման աշխատանքներ*

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, համաձայն Կառավարության 2018 թվականի փետրվարի N108 որոշման պահանջներին համապատասխան:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,
- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է

ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումը իրականացվելու է ցնցուղային եղանակով, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Կանաչապատ տարածքների ոռոգման համար ընկերությունը կդիմի լիազորված մարմնին համապատասխան ջրամատակարարման տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Կանաչապատման աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ձեռք բերել մոտ 1000մ³ բուսահող: Բուսահողի ձեռքբերման վայրը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Ստորև ներկայացվում է ծառերի և բուսատեսակների անվանացանկը:

Թղկի սրտատերեվ կարմիր - 12 հատ

Գնդաձեվ իլենի - 4 հատ

Գնդաձեվ թույա - 6 հատ

Բարբարիս - 3 հատ

Ասպիրակ - 4 հատ

Ֆորզիցիա - 3 հատ

Խենոմելիս - 5 հատ

Սամշիտ - 108 գծմ

Եղեվնի կովկասյան - 5 հատ

Թզուկ վարդեր - 30 մ²

Սիզամարգ - 839 մ²

1.5.9 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$


որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 839.17 \text{ մ}^2$,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, $K = 2$

t – ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, $t = 175$ օր

$$W_{u.3} = (0.006 \times 839.17 \times 2 \times 175 = 1762 \text{ մ}^3/\text{տարի}$$

1.5.10 Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ









2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարծքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3 Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4 Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 30 ամիս: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” էքսկավատորով:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոստրակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզանական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կռունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կռունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝

դեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Կռունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության դեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը:

Աշտարակային կռունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լուրջ հաշվարկով: Աշտարակային կռունկի մոնտաժման աշխատանքները իրականացվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կռունկի անձնագրային տվյալների:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղխային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ոռոգման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել ադմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են

Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ

- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

2.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև՝

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Աշտարակային կցովի վերամբարձ կրունկ	QTZ 125 H 6015	1
2	Ավտոմոբիլային կտունկ	LIEBHERR LTM 1100-4.2	1
3	Էքսկավատոր՝	CAT 320	3
4	Շարժական կոմպրեսոր	Comp air C 76	1
5	Ավտոբեռնապոմպ	Merc B. Acrtos 4144 D	2
6	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	IB-91A	2
7	Թրթռիչ խորքային էլեկտրական	IB-102A	4
8	Փոխարկիչ թրթռիչների համար	IB-4	2
9	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		4
10	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	2
11	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
12	Ավտոբեռնախառնիչ	Kamaz 58149 z	ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

2.3 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Նախատեսվող բնակելի շենքի հողային աշխատանքների իրականացման արդյունքում կառաջանա՝

- հանույթ՝ 15500մ³ հողային զանգված
- հետլիցք՝ 3000մ³ հողային զանգված

Ավելցուկային 12500 խմ հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 72 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 3 մարդ
- Բանվորներ - 69 մարդ

2.3.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.լ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³/օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 69 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³/օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 780 օր

$$W_{\text{լ.տ.}} = (3 \times 0.016 + 69 \times 0.025) \times 780 = 1382.94 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.773 \text{ մ}^3/\text{օր:}$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 1832 մ²,

K₁ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 450

D – օրեկան ջրցանի քանակը, 2

$$U_1 = 1832 \times 0.0015 \times 450 \times 2 = 2473.2 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 5.4 \text{ մ}^3/\text{օր}$$

c) Ամիվների լվացման և ջրալցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_2 = S_2 \times K_2 \times T, \text{ որտեղ՝}$$

S₂ – լվացվող ավտոմեքենաների քանակը, 10 հատ,

K₂ – միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 մ³,

T – ժամանակահատվածը օրերով, 780

$$U_2 = 10 \times 0.14 \times 780 = 1092 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.4 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 4948,14 մ³/շին. ժամ:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն թվով 2 հատ ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք

շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն: Բիոգուգարանները կսպասարկվեն մասնագիտացված կազմակերպության կողմից և կդատարկվեն ըստ անհրաժեշտության:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրված տեժնիկական պայմանի:

Խմելու վորակի ջուրը կմատակարարվի շալցված, մասնագիտացված ընկերության կողմից:

Անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեգում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռագվի որպես շինադիր:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Վարչական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևան քաղաքի կենտրոնական մասում, Շենգավիթ վարչական շրջանի տարածքում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Քանաքեռ-Արաբկիրի հրաբխային սարավանդի սահմաններում, նրա հարավ-արևելյան եզրամասում, Էռզիոնա-հողմնահարման լանջերի վրա, որոնք ունեն հարավային, հարավ-արևելյան ուղղվածություն, մեղմ անկումներ: Ռելիեֆը հիմնականում հարթ է մեղմ անկմամբ դեպի հարավ-արևմուտք:

Մակերեսի նիշերը տատանվում են 948.0-949.0 մետրի սահմաններում:

Նախնական զննման և փաստագրման արդյունքում կոմունիկացիոն հաղորդակցուղիներ չեն բացահայտվել, բացառությամբ հարևան շինության մալուխի և ջրագծի:

3.1 Ջրային ցանցը

Ջրային ցանցը տեղամասում քիչ զարգացած է, տարածքի հիմնական ջրային երակ է հանդիսանում Հրազդան գետը, որի ռեժիմն ամբողջությամբ կարգավորված է տարատեսակ հիդրոտեխնիկական կառույցներով, ինչպես նաև Գետառ գետը, որի հունը ևս կարգավորված է:

3.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակները՝

Շերտ թիվ-1 լիցքային գրունտ(հողա-բուսական ծածկույթ) չպառկապնդված, խճամանրախճային կազմի, հազվա-դեպ մեծաբեկորներով, կավային և ավազային նյութի խառնուրդով մինչև 30%, երբեմն շինարարական թափոններով, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.3-0.8 մետր, տեղամասի առանձին մասերում լիցքային գրունտները կույտերի տեսքով են լցված:

Տեխնածին առաջացումներ

Շերտ թիվ-2 կավավազ բաց դարչնագույն, դեղնավուն երանգով, կարբոնատացած, սպիտակահողային, տարահատիկ և փոշենման ավազային նյութի խառնուրդով, փոշենման ավազների նրբաշերտերով և ոսպնյակներով, խճի, մանրախճի հազվադեպ մեծաբեկորների պարունակությամբ, գրունտը տեղ-տեղ ցեմենտացած է, սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.4-1.6 մետր:

Չորրորդականի հասակի էյուվիա-պրոյուվիալ առաջացումներ

Շերտ թիվ-3 խճա-մեծաբեկորային գրունտ, հրաբխային ապարներից, կավավազավազային, մասամբ խարամա-ավազային լցանյութով մինչև 30%, տեղ-տեղ կավավազի բներով և ոսպնյակներով, տեղ-տեղ հողմնահարված խճի աստիճանի, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-3.0 մետր:

Չորրորդականի հասակի էլյովիա-պրոլյուվիալ առաջացումներ

Շերտ թիվ-4 բազալտ, անդեզիտա-բազալտ մեծաբեկորային, մոխրագույն, երբեմն խայտաբղետ երանգներով, ծակոտկեն և ճեղքավորված, միջբեկորային խարամա-ավազային լցանյութով մինչև 20%, միջին ամրության, տարածումը համատարած է, միջին հզորությունը՝ 10.0-14.0 մետր:

Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ

Շերտ թիվ-5 խարամ հրաբխային, մոխրագույն, խայտաբղետ երանգներով, խճամանրախճային կազմի, տեղ-տեղ ավազային կազմի, մասամբ կավավազային լցանյութով, տարածումը համատարած է, միջին հզորությունը՝ 1.0 մետր:

Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ

Շերտ թիվ-6 գլաքարա-ճալքաքարային գրունտ, հրաբխային ապարներից, լավ և միջին հղկվածության, ավազային, երբեմն ավազակավային լցանյութով մինչև 25%, միջին խտության, խոնավ և ջրհագեցած, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը համաձայն ֆոնդային նյութերի՝ 24.0 մետր:

Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ

3.3 Հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում առկա են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային և նստվածքային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ կապված ստորգետնյա ջրերը, որոնք պատկանում են ծակոտկենա-դատարկությունների ջրերի տարատեսակներին: Համաձայն առկա ֆոնդային նյութերի տվյալների ստորգետնյա ջրերը տեղադրված են 15.5 մետր խորության վրա: Գրունտային ջրերը տեղամասում փորված հորատանցքերով չեն բացահայտվել: Գրունտային ջրերի մակարդակի մասին տեղեկությունը տրվում է համաձայն Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հաստատման համար ինժեներա-երկրաբանական և երկրաֆիզիկական ուսումնասիրությունների հաշվետու նյութերի(հորատանցք թիվ 482 հորատված մինչև 1990թ):

3.4 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 22-01-2024 տվյալների համաձայն:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 2.1.

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Էրեբունի»	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Երևան «Էրեբունի»	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	79	67	45	28

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն												Տեղումների քանակը նոյեմբեր- մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ	
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	128	163
«Էրեբունի»	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51		

Քանու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-” Էրեբունի” մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Քանու բնութագիրը

Աղյուսակ 2.4.



Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անդրերի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		ըստ ուղղությունների													
		Միջին արագությունը, մ/վ													
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Էրեբունի»	հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	Հվ	2.4	Հվ	2.7
		2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7						
	ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1.9				
		3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6						
	հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8				
		5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3						
	հոկտեմբեր	6	18	10	10	21	20	10	5	63	1.0				
		2.9	2.5	2.1	2.5	2.3	2.4	2.9	3.5						


3.5 Օդային ավազան

Օդային ավազանի որակի մոնիթորինգը կատարվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոթերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից:


Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան: 2024 թվականի 4-րդ եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան դեկտեմբեր ամսին աննշան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն:

Ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:






Գծապատկեր 15. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 23. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գեոմետրիկ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

**Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի SO_2 միջին
ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՖՈՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐ (ՀՆԳԱՄՅԱ ՄԻՋԻՆ)

Քաղաք	Աղտոտող նյութ	Միջին հնգամյա կոնցենտրացիա (ֆոն), մգ/մ3
Երևան	Ազոտի երկօքսիդ	0.026
	Ծծմբի երկօքսիդ	0.017
	Ածխածնի օքսիդ	1.5
	Փոշի	0.142

3.6 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները 2024 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ ամոնիում իոնով, Գեղանիստ գյուղի մոտ հատվածում՝ նիտրիտ իոնով: Երևանյան լճի մուտքի մոտ հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և ընդհանուր ֆոսֆորով: Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

3.7 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

3.8 Հողային ռեսուրսներ

Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 15500մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 3000 մ³ հետլիցք: Ավելցուկային 12500 խմ հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

3.9 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում

ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (Ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Գործունեության ենթակա տարածքում տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ Սեզ սողացող (*E. repens*), Սեզ սանրանմանը (*E. cristatum*), Սեզ մազակիրը (*E. trichophora*), Սեզ միջինը (*E. intermedia*), Սեզ երկարավունը (*E. elongatum*), Քնձմնձուկ իզոպիրոնման-*Thalictrum isopyroides* C.A.Mey.:

Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

3.10 Կենդանական աշխարհ

Երևանի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով:

Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատու սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ռնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրազդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Նորք-Մարաշ վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

3.11 Բնության հատուկ պահպանվող տարածքներ


Տարածաշրջանի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում տարածաշրջանում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ): Սակայն, այդ ԲՀՊՏ-ները գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից զգալի հեռավորության վրա, որտեղ դրանք չեն կարող կրել գործունեության ազդեցությունը: Այսպես մոտակա ԲՀՊՏ-ներն են՝



- «Էրեբունի» արգելոց՝ 15 կմ,
- «Խոսրովի անտառ» արգելոց՝ 25 կմ:




3.12 Պատմամշակութային հուշարձաններ

Ներկայացնում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի պատմության և մշակութային հուշարձանների ցանկը: Ցանկում ներառված է ընդամենը 35 հուշարձան (123 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համար անիշ	նշան.	հավելյալ նշումներ
Բարձրաքանդակներ «Սասունցի Դավիթ»	1980 թ.	Սևանի փ. 13	—	1.11/1	S	քանդ.՝ Ա. Հովսեփյան, Մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» կայարանի շենքում
Բնակատեղի Շենգավիթ	մ.թ.ա. 4-3 հզ	հվ-ամ մասում, Երևանյան լճի աե հրվանդանին	—	1.11/2	Հ	
Գաղտնուղի	մ.թ.ա. 3 հզ		—	1.11/2.1	Հ	
Մենհիր	մ.թ.ա. 3 հզ		—	1.11/2.2	Հ	բնակատեղի թանգարանի մուտքի մոտ
Բնակելի տուն	1953-1956 թթ.	Արշակունյաց պ. 62	—	1.11/3	S	ճարտ.՝ Ս. Մանուկյան, Զ. Տոնիկյան
Բնակելի տուն	18-19 դդ.	Նորագավթի 7-րդ փ. 58ա	—	1.11/4	S	
Բնակելի տների	1932 թ.	Բազրատունյաց	—	1.11/5	S	ճարտ.՝ Գ. Քոչար, Մ. Մազմանյան, Հ.

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
համալիր. Մինթետիկ կաուչուկի գործարանի բնակելի շենքերը		Եղբայրության, Մանանդյան փ. տարածքում				Մարգարյան, Ս. Սաֆարյան, Ա. Ահարոնյան
Գերեզման Շուշանիկ Կուրդիյանի	1927 թ., 1952 թ.	Արշակունյաց պ. 28/5, Կոմիտասի անվ. զբոսայգում	40°09'37" հս.. 44°30'09" ավ. 	1.11/6	Հ	քանդ.՝ Ս. Բաղդասարյան, ճարտ.՝ Ջ. Թորոսյան
Գերեզմանոց	12-19 դդ.	Նորագավթի 7-րդ փ. 1-ին նրբ.	—	1.11/7	Հ	
Խաչքար	11-12 դդ.		—	1.11/7.1	Հ	մատուռից 5 մ հվ, պահպանված են միայն վերին ու ստորին բեկորները
Խաչքար	12-13 դդ.		—	1.11/7.2	Հ	գերեզմանոցի հվ-ամ մասում
Խաչքար	12-13 դդ.		—	1.11/7.3	Հ	մատուռի հվ կողմում
Խաչքար Հովհաննես քահանայի	12-13 դդ.		—	1.11/7.4	Հ	գերեզմանոցի հվ-ամ մասում պահպանված է միայն խորանարդաձև արձանագիր պատվանդանը
Խաչքար	16 դ.		—	1.11/7.5	Հ	մատուռի մոտ, Ամիրի խաչքարի մոտ
Խաչքար Ամիրի	16 դ.		—	1.11/7.6	Հ	մատուռի մոտ
Խաչքար	17 դ.		—	1.11/7.7	Հ	հենած մատուռի փլատակներին
Կոթող	5-6 դդ.		—	1.11/7.8	Հ	մատուռի հվ կողմում պահպանված է միայն պատվանդանը
Մատուռ Հոգեհանգստյա ն	4-7 դդ.		—	1.11/7.9	Հ	գերեզմանոցում

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համար անիշ	նշան.	հավելյալ նշումներ
Խաչքար	13 դ.		—	1.11/7.9.1	Հ	դրված՝ գլխիվայր, մատուռում, պահպանված է ստորին մասը
Գերեզմանոց	19-20 դդ.	Նորագավթի 6-րդ փ.	—	1.11/7	S	թիվ 86 բնակելի տան հարևանությամբ
Դամբարան	մ.թ.ա. 8-7 դդ.	Արշակունյաց պ. 34, Ավտոագրեզատների գործարանի տարածքում	—	1.11/8	Հ	1984-ին նախագծվել և իրականացվել է պահպանական կառույց, նախագիծը ճարտ.՝ Վ. Ճաղարյանի
Եկեղեցական համալիր Նորագավթի Մբ. Գևորգ(Ծիրան ավոր Մբ. Գևորգ)	4-7 դ. 13-17 դդ.	Նորագավթի 7-րդ փ.	40°07'03" hu.. Լ. 44°28'25" ավ. Է.  HGRO	1.11/9	Հ	
Եկեղեցի Մբ. Գևորգ (Ծիրանավոր)	17 դ. վրկո՝ 1855-1856 թթ.		40°07'03" hu.. Լ. 44°28'26" ավ. Է.  HGRO	1.11/9.1	Հ	վրկո՝ 1982 թ.
Խաչքար Ավետիսի	1642 թ.		—	1.11/9.1.1	Հ	ազուցված առ պատին
Խաչքար Հովհաննեսի, Վարդանի և Կարապետի	1642 թ.		—	1.11/9.1.2	Հ	ազուցված ամ պատին
Խաչքար Սարգսի	1642 թ.		—	1.11/9.1.3	Հ	ազուցված ամ պատին
Խաչքար Հակոբի և Ասատուրի	17 դ.		—	1.11/9.1.4	Հ	եկդ-ցու առ պատին, քիվի տակ
Խաչքար Վարդանի	17 դ.		—	1.11/9.1.5	Հ	ազուցված առ պատին
Որմնանկար «Անհայտ զինվոր»	19-20 դդ.		—	1.11/9.1.6	S	հվ-առ պյան հս երեսին
Որմնանկար «Ավետում»	18-19 դդ.		—	1.11/9.1.7	S	հվ-ամ պյան հս երեսին

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համար անիշ	նշան.	հավելյալ նշումներ
Որմնանկար «Թեոդորոսը»	18-19 դդ.		—	1.11/9.1.8	S	հվ-ամ սյան աե երեսին
Որմնանկար «Հրեշտակ»	18 դ.		—	1.11/9.1.9	S	հվ-աե սյան ամ երեսին
Որմնանկար «Մբ. Մինասը ձիու վրա»	18-19 դդ.		—	1.11/9.1.10	S	հս-աե սյան հվ երեսին
Որմնանկար «Սարկավագ»	18-19 դդ.		—	1.11/9.1.11	S	հվ-աե սյան հվ երեսին
Եկեղեցի Մբ. Գրիգոր Լուսավորիչ	4-7 դդ.		40°07'04" հս.. 44°28'23" ավ. Է.  HGRO	1.11/9.2	Հ	
Խաչքար	9 դ.		—	1.11/9.2.1	Հ	եկղ-ցու հվ-ամ անկյան մոտ, պահպանված է ստորին մասը
Խաչքար	16-17 դդ.		—	1.11/9.2.2	Հ	մուտքի մոտ, արձանագիր, պահպանված է վերին մասը
Եկեղեցի Մբ. Կիրակի	19 դ.		40°07'03" հս.. 44°28'24" ավ. Է.  HGRO	1.11/9.3	Հ	վրկնգ՝ 1981-1985 թթ.
Դպրոցի շենք. Ծխական դպրոցը	1865 թ.		40°07'04" հս.. 44°28'24" ավ. Է.  HGRO	1.11/9.4	S	
Գերեզմանոց	13-17 դդ.		—	1.11/9.5	Հ	համալիրի շուրջը
Խաչքար	17 դ.		—	1.11/9.5.1	Հ	եկղ-ցու աե պատի տակ
Խաչքար	17 դ.		—	1.11/9.5.2	Հ	եկղ-ցու աե պատի տակ
Խաչքար	17 դ.		—	1.11/9.5.3	Հ	եկղ-ցու աե պատի տակ
Խաչքար	17 դ.		—	1.11/9.5.4	Հ	եկղ-ցու աե պատի տակ
Խաչքար Գեղեցիկի	17 դ.		—	1.11/9.5.5	Հ	եկղ-ցու աե պատի տակ, պահպանված է վերին կեսը

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համար անիշ	նշան.	հավելյալ նշումներ
Խաչքար Էմանուել Եպիսկոպոսի	17 դ.		—	1.11/9.5.6	Հ	Եկղ-ցու աե պատի տակ
Խաչքար Տեր Հովհաննեսի	17 դ.		—	1.11/9.5.7	Հ	Եկղ-ցու աե պատի տակ, պահպանված է վերնամասը
Հուշարձան Հունան Ավետիսյանի	1956 թ.	Բագրատունյաց փ. 23	—	1.11/10	S	թիվ 74 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ Թ. Էրեզա Միրզոյան , ճարտարապետ՝ Է. Պուարդ Սարապյան
Հուշարձան Վիսարիոն Բելինսկու	1957 թ.	Գարեգին Նժդեհի փ. 22	—	1.11/11	S	թիվ 38 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ Ա. րա Հարությունյան , ճարտարապետ՝ Ֆ. Էնիքս Դարբինյան
Հուշարձան Դերենիկ Դեմիրճյանի	1977 թ.	Արտաշիսյան փ. 52	—	1.11/12	S	թիվ 27 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ Վ. Պետրոսյան, ճարտ՝ Լևոն Ղալումյան
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհված օդաչուներին	1985 թ.	Արշակունյաց պ.	—	1.11/13	S	քանդակագործ՝ Մ. Ջաղացյանյան, ճարտ.՝ Օ. Բերբերյան
Հուշարձան Լեոյի	1972 թ.	Ֆրունզեի փ. 56	—	1.11/14	S	թիվ 65 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ Հ. Մուրադյան, ճարտ՝ Շ. Ազատյան
Հուշարձան Ալեքսանդր Մյասնիկյանի	1959 թ.	Թամանցիների փ. 9	—	1.11/15	S	թիվ 66 համանուն դպրոցի առջև, քանդակագործ՝ Գր. Իզոր Ահարոնյան , ճարտ՝ Էդուարդ Սարապյան
Հուշարձան	1955 թ.	Բագրատունյաց	—	1.11/16	S	թիվ 18 համանուն

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Մուրացանի		ց փ. 32				դպրոցի առջև, քանդակագործ՝ Արա Հարությունյան , ճարտարապետ՝ Ֆենիքս Դարբինյան
Հուշարձան Հովհաննես Շիրազի	1992 թ.	Շիրակի փ. 5-րդ նրբ.	—	1.11/17	Տ	թիվ 169 համանուն դպրոցի առջև
Որմնանկարներ	1974 թ.	Գարեգին Նժդեհի փ. 28	—	1.11/18	Տ	Մեքենաշինական տեխնիկումի շենքում, նկ՝ Մ. Ավետիսյան
Պանթեոն Կոմիտասի անվան զբոսայգու	1939 թ.	Արշակունյաց պ. 28/5	—	1.11/19	Հ	
Հուշապատ	1969 թ.		—	1.11/19.1	Հ	քանդ.՝ Ռուզան Բյուրքյան , ճարտ.՝ Ստեփան Բյուրքյան
Գերեզման Հովհաննես Աբելյանի	1936 թ.		—	1.11/19.2	Հ	
Գերեզման Վրթանես Ախիկյանի	1964 թ.		—	1.11/19.3	Հ	
Գերեզման Վարդան Աճեմյանի	1979 թ.		—	1.11/19.4	Հ	քանդ.՝ Ֆ. Առաքելյան, ճարտ.՝ Ա. Թարխանյան
Գերեզման Գրիգոր Արզումանյանի	1980 թ.		—	1.11/19.5	Հ	ճարտ.՝ Կ. Անանյան
Գերեզման Վահագն Դավթյանի			—	1.11/19.6	Հ	
Գերեզման Կարեն Դեմիրճյանի	1999 թ.		—	1.11/19.7	Հ	
Գերեզման Ստեփան Դեմուրյանի	1964 թ.		—	1.11/19.8	Հ	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Գերեզման Ստեփան Զորյանի	1977 թ.		—	1.11/19.9	Հ	քանդ.՝ Ղ. Զուբարյան, ճարտ.՝ Լ. Զորյան, Կ. Զորյան
Գերեզման Եղիշե Թադևոսյանի	1961 թ.		—	1.11/19.10	Հ	ճարտ.՝ Կ. Դրամիկյան, քանդ.՝ Ա. Հարությունյան
Գերեզման Ալեքսանդր Թամանյանի	1947 թ.		—	1.11/19.11	Հ	
Գերեզման Թորոս Թորամանյանի	1947 թ.		—	1.11/19.12	Հ	
Գերեզման Ավետիք Իսահակյանի	1962 թ.		—	1.11/19.13	Հ	քանդ.՝ Ս. Բադդասարյան, ճարտ.՝ Է. Սարապյան
Գերեզման Երվանդ Լալայանի	1931 թ.		—	1.11/19.14	Հ	
Գերեզման Լեոյի	1932 թ., 1964 թ.		—	1.11/18.15	Հ	ճարտ.՝ Ս. Քյուրքչյան
Գերեզման Սահակ Լիսիցյանի	1964 թ.		—	1.11/19.16	Հ	
Գերեզման Յուլակ Խանզադյանի	1964 թ.		—	1.11/19.17	Հ	
Գերեզման Արամ Խաչատրյանի	1981 թ.		—	1.11/19.18	Հ	ճարտ.՝ Ս. Քյուրքչյան
Գերեզման Իսկո-Ապոբ	1964 թ.		—	1.11/19.19	Հ	
Գերեզման Կոմիտասի	1955 թ.		—	1.11/19.20	Հ	քանդ.՝ Ս. Հարությունյան, ճարտ.՝ Գ. Աղաբաբյան
Գերեզման Հովհաննես Հովհաննիսյանի	1964 թ.		—	1.11/19.21	Հ	
Գերեզման Հրաչյա	1988 թ.		—	1.11/19.22	Հ	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Ղափլանյանի						
Գերեզման Վասիլի Ղորղանյանի	1964 թ.		—	1.11/19.23	Հ	
Գերեզման Ստեփան Մանուկյանի	1947 թ.		—	1.11/19.24	Հ	
Գերեզման Ռոմանոս Մելիքյանի	1964 թ.		—	1.11/19.25	Հ	
Գերեզման Սպիրիդոն Մելիքյանի	1964 թ.		—	1.11/19.26	Հ	
Գերեզման Մհեր Մկրտչյանի	1993 թ.		—	1.11/19.27	Հ	
Գերեզման Տիգրան Մուշեղյանի	1964 թ.		—	1.11/19.28	Հ	
Գերեզման Հրաչյա Ներսիսյանի	1969 թ.		—	1.11/19.29	Հ	ճարտ.՝ Ս. Քյուրքյան
Գերեզման Հովհաննես Շիրազի	1984 թ.		—	1.11/19.30	Հ	քանդ.՝ Ա. Շիրազ
Գերեզման Ալեքսանդր Շիրվանզադեի	1935 թ., 1957 թ.		—	1.11/19.31	Հ	քանդ.՝ Ա. Հարությունյան, ճարտ.՝ Ջ. Թորոսյան
Գերեզման Համո Սահյանի			—	1.11/19.32	Հ	
Գերեզման Մարտիրոս Սարյանի	1978 թ.		—	1.11/19.33	Հ	ճարտ.՝ Ջ. Թորոսյան
Գերեզման Վիլյամ Սարոյանի	1988 թ.		—	1.11/13. 34	Հ	քանդ.՝ Ա. Շիրազ, ճարտ.՝ Ջ. Թորոսյան
Գերեզման Վահան Տերյանի	1964 թ.		—	1.11/19.35	Հ	1920 թ. Օրենբուրգ, ճարտ.՝ Ս. Քյուրքյան
Գերեզման Վահրամ	1980 թ.		—	1.11/19.36	Հ	քանդ.՝ Ռ. Քյուրքյան,

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Փափազյանի						Ճարտ.՝ Ս. Քյուրքյան
Գերեզման Վրթանես Փափազյանի	1980 թ.		—	1.11/19.37	Հ	
Ցուցահանդեսային համալիր. «Ժողովրդական տնտեսության նվաճումներ» («Արմէքսպո»)	1961 թ.	Շիրակի փ. 43	—	1.11/20	Հ	
Տաղավար Կրթության և մշակույթի	1961 թ.		—	1.11/20.1	S	Ճարտ.՝ Ֆնիքս Դարբինյան, Ռ. Մելքունյան
Տաղավար Հյուրերի	1961 թ.		—	1.11/20.2	S	Ճարտ.՝ Ֆենիքս Դարբինյան , Ռ. Մելքունյան, նախկինում՝ Գիտության տաղավար
Տաղավար Մեքենաշինության	1961 թ.		—	1.11/20.3	S	Ճարտ.՝ Լ. Գևորգյան, Ջիվ Թորոսյան , կոնստ.՝ Ռ. Մանուկյան, նախկինում՝ Արդյունաբերության տաղավար
Փողոցի կառուցապատման հատվածներ. Նորագավթի 1-ին փողոցը	19 դ. վրջ - 20 դ. սկզբ	Նորագավթի 1-ին փ.	—	1.11/21	S	
Բնակելի տուն	19 դ. վրջ	Նորագավթի 1-ին փ. 86	—	1.11/21.1	S	
Բնակելի տուն	19 դ. վրջ	Նորագավթի 1-ին փ. 88 ա	—	1.11/21.2	S	
Բնակելի տուն	19 դ. վրջ	Նորագավթի 1-ին փ. 88 բ	—	1.11/21.3	S	
Բնակելի տուն	19 դ. վրջ	Նորագավթի 1-ին փ. 90	—	1.11/21.4	S	
Բնակելի տուն	1898 թ.	Նորագավթի 1-	—	1.11/21.5	S	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
		ին փ. 100				
Քաղաքատեղի Թեյշեբախնի (Կարմիր բլուր)	մ.թ.ա. 12-9 դդ., 7-6 դդ.	Վերին Չարբախ թաղամաս, Կարմիր բլուր	—	1.11/22	Հ	քաղաքի հվ-ամ կողմում, Հրազդանի ձախ ափին
Բնակելի թաղամաս	մ.թ.ա. 8-6 դդ.		—	1.11/22.1	Հ	միջնաբերդից հվ
Բնակելի տուն	մ.թ.ա. 7-6 դդ.		—	1.11/22.1.1	Հ	հարուստ ուրարտացու տուն
Բնակելի տուն	մ.թ.ա. 7-6 դդ.		—	1.11/22.1.2	Հ	սեկցիոն
Բնակելի տուն	մ.թ.ա. 7-6 դդ.		—	1.11/22.1.3	Հ	մեզարոնաստիպ
Միջնաբերդ	մ.թ.ա. 7-6 դդ.		—	1.11/22.2	Հ	
Քանդակ «Կաշեգործ»	1965 թ.	Կույբիշևի փ. 18	—	1.11/23	S	Կաշվի գործարանի բակում, քանդ.՝ Ս. Բաղդասարյան
Քարայր-կացարան «Երևան-1»	մուստերյան շրջան	Երևանյան լճի աջ ափին, սկզբնամասում	—	1.11/24	Հ	
Քարայր-կացարան «Երևան-2»	մուստերյան շրջան	Երևանյան լճի աջ ափին, սկզբնամասում	—	1.11/25	Հ	«Երևան-1»-ից 300 մ գետի հոսանքով դեպի վեր
Քարայր-կացարան «Երևան-3»	մուստերյան շրջան	Երևանյան լճի աջ ափին, սկզբնամասում	—	1.11/26	Հ	«Երևան-2»-ից 200 մ գետի հոսանքով դեպի վեր
Քարայր-կացարան «Կարմիր Բլուր-1»	մ.թ.ա. 7 դդ., 15-16 դդ.	Արգավանդ գյուղից դեպի ձորն իջնող խճուղուց 200 մ գետի հոսանքով դեպի վեր	—	1.11/27	Հ	
Քարայր-կացարան «Կարմիր Բլուր-2»	մ.թ.ա. 7 դդ., 15-16 դդ.	Արգավանդ գյուղի մոտերքում	—	1.11/28	Հ	նախորդից 100 մ խճուղով դեպի վեր
Քարայր-կացարան «Կարմիր Բլուր-3»	մ.թ.ա. 7 դդ., 15-16 դդ.	ՆԳ բարձրագույն դպրոցի շրջակայքում	—	1.11/29	Հ	նախորդից 600 մ հեռու դեպի խճուղին, հայտնաբերված 1967 թ.

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համար անիշ	նշան.	հավելյալ նշումներ
Քարայր-կացարան «Կարմիր Բլուր-4»	մ.թ.ա. 7 դ., 15-16 դդ.	ՆԳ Բարձրագույն դպրոցի շրջակայքում	—	1.11/30	Հ	նախորդից 10 մ հեռու դեպի խճուղին, խճուղու վերջում, հայտնաբերված 1967 թ.
Քարայր-կացարան «Կարմիր Բլուր-5»	մ.թ.ա. 7 դ., 15-16 դդ.	ՆԳ Բարձրագույն դպրոցի շրջակայքում	—	1.11/31	Հ	նախորդից 80 մ հեռու, հայտնաբերված 1967 թ.
Քարայր-կացարան «Շենգավիթ-1»	քարի դար, մ.թ.ա. 4-1 հզմ		—	1.11/32	Հ	կամրջի ամ կողմից 50 մ հվ, հայտնաբերված՝ 1967 թ.
Քարայր-կացարան «Շենգավիթ-2»	քարի դար, մ.թ.ա. 4-1 հզմ		—	1.11/33	Հ	կամրջից հս, հայտնաբերված՝ 1967 թ.
Քարայր-կացարան «Շենգավիթ-3»	մ.թ.ա. 4-1 հզմ		—	1.11/34	Հ	կամրջից հս, Շենգավիթ-2 քարայրից 30 մ հս, հայտնաբերված՝ 1968 թ.
Քարայր-կացարան «Շենգավիթ-4»	մ.թ.ա. 4-1 հզմ		—	1.11/35	Հ	կամրջից հս, Շենգավիթ-2՝ քարայրի հարևանությամբ

3.13 Աղմուկ և թրթռում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀԾՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ,

ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում հողային աշխատանքների իրականացնելիս 2 էքսկավատորներ և 1 կռունկ, իսկ շենքերի կառուցման ընթացքում 3 ամրակապովի և մեկ ավտոմոբիլային կռունկ: Հաշվարկը առված է ենթադրելով, որ այս շին.տեխնիկան շահագործվում միաժամանակ յուրաքանչյուր շինարարության փուլում՝ աղմուկի առավելագույն արժեքը հաշվարկելու համար:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» շինարարական նորմերի:

Հաշվարկները կատարված են հետևյալ բանաձևով՝

$$L = L_w + 10 \cdot \lg \left(\frac{\chi \Phi}{\Omega r^2} + \frac{4}{kB} \right)$$

Հողային աշխատանքների փուլ

Ելակետային տվյալներ

- Էքսկավատորի CAT 320 ձայնային հզորություն (L_{w1})՝ 99 դԲ
- Կռունկ LIEBHERR LTM 1100-4.2 ձայնային հզորություն (L_{w2})՝ 100 դԲ
- Հեռավորություն (r)՝ 50 մետր

Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ

- $\chi = 1$ (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- $\Phi = 1$ (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- $\Omega = 2\pi$ (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- $k = 1$ (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- $B = 200$ (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ²)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Էքսկավատորի աղմուկի մակարդակ՝ $L_{w1} = 99 + 10 \cdot \log_{10} ((1 \cdot 1 / (2 \cdot \pi \cdot 50^2) + 4 / 1 \cdot 200) = 99 + 10 \cdot (-16.98) = 82.02$ դԲ
- Կռունկի աղմուկի մակարդակ՝ $L_{w2} = 100 + 10 \cdot \log_{10} ((1 \cdot 1 / (2 \cdot \pi \cdot 50^2) + 4 / 1 \cdot 200) = 100 + 10 \cdot (-16.98) = 83.02$ դԲ

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$$L_{\text{էկվ}} = 10 \cdot \log_{10} (2 \cdot 10^{\{82.02/10\}} + 10^{\{83.02/10\}}) = 10 \cdot \log_{10} (2 \cdot 10^{\{8.202\}} + 10^{\{8.302\}}) = 87.15 \text{ դԲ}$$

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երկու էքսկավատոր և մեկ կռունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 87.15 դԲ:

Շենքերի կառուցման փուլ

Ելակետային տվյալներ

- Կռունկ QTZ 160 ձայնային հզորություն (L_{w1})՝ 105 դԲ
- Հեռավորություն (r)՝ 50 մետր

Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ

- $\chi = 1$ (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- $\Phi = 1$ (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- $\Omega = 2\pi$ (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- $k = 1$ (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- $B = 200$ (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ²)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Կռունկ աղմուկի մակարդակ՝ $L_{w1} = 105 + 10 \cdot \log_{10}((1 \cdot 1/(2\pi \cdot 50^2) + 4/1 \cdot 200) = 105 + 10 \cdot (-16.98) = 88.02$ դԲ

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$$L_{A_{\text{էկվ}}} = 10 \cdot \log_{10}(3 \cdot 10^{\{88.02/10\}}) = 10 \cdot \log_{10}(3 \cdot 10^{\{8.802\}}) = 92.79 \text{ դԲ}$$

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երեք կռունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 92.79 դԲ:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը 200 կգ/մ³: Ցանկապատը հանդիսանում է միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$L_{\text{աղ}} = 23 \cdot \lg m_{\text{է}} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^3$$

$$L_{\text{աղ}} = 13 \cdot \lg m_{\text{է}} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^3$$

Որտեղ $m_{\text{է}} = K \cdot m$ - մակերեսի խտության էկվիվալենտն է,

m - մակերեսի խտությունն է, կգ/մ³,

K - գործակից է, որի հաշվի է առնում մետաղական պատնեշի խտությունը, որը 7850 կգ/մ³

$$m_{\text{է}} = 7850 \cdot 1 = 7850$$

$$L_{\text{աղ}} = 23 \cdot \lg m_{\text{է}} - 13 = 23 \cdot \lg(7850) - 13 = 23 \cdot 3.894 - 10 = 89.562 - 10 = 79.56 \text{ դԲ}$$

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կազմում է՝

Հողային աշխատանքների փուլ

$$L_{A_{\text{տար}}} = L_{A_{\text{էկվ}}} - L_{\text{աղ}} = 87.15 - 79.56 = 7.59 \text{ դԲ}$$

Շենքերի կառուցման փուլ

$$L_{A_{\text{տար}}} = L_{A_{\text{էկվ}}} - L_{\text{աղ}} = 92.79 - 79.56 = 13.23 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը հողային աշխատանքների փուլում կկազմի 7.59 դԲ, իսկ շենքերի կառուցման փուլում՝ 13.23 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է:

Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

3.14 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է

չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, ամբողջ շինարարության համար
1.	Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	IV	9120060101004	480մ ³
2.	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	0.7 տ/տարի
3.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 99 5	12500 մ ³
4.	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ	IV	35131100 01 00 4	7 մ ³
6.	Չտեսակավորված ալյումինի ջարդոն	V	35310101 01 99 5	3 մ ³
7.	Յուղերով աղտոտված ավազ /յուղի պարունակությունը 15%-ից ավելին/	III	31402303 04 03 3	8 մ ³
8.	Պողպատե եռակցման էլեկտրոդների մնացորդներ և կիսայրուկներ	V	35121601 01 99 5	0.1տ

Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բազմաբնակարան բնակելի շենքի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

3.15 Աղմուկ և թրթռում:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական աղմուկի աղբյուր է հանդիսանալու շահագործվող շինարարական տեխնիկան: Աղմուկի մակարդակի չգերազանցելու նպատակով իրականացվելու են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

3.16 Սոցիոլական գործոն

Երևանը համայնք է՝ Երևանի բնակչության հանրություն: Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Երևանը իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ:

Երևանն ունի բյուջե, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք: Երևանում տեղական ինքնակառավարումը հիմնվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքների վրա՝ ապահովելով Երևանի բոլոր վարչական շրջանների համաչափ զարգացումը: Երևանի վարչական սահմանները սահմանված են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով: Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններն են Երևանի ավագանին, Երևանի քաղաքապետը: Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները գործում են իրենց նստավայրում՝ Արգիշտիի փողոց 1 հասցեում: Ավագանու որոշմամբ ավագանին իր գործունեությունը (ներառյալ՝ նիստերի անցկացումը) կարող է կազմակերպել այլ վայրում: Տարածքային կառավարումը Երևանում իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: Կառավարության որոշմամբ Երևանում տարածքային կառավարման որոշակի գործառույթներ կարող են փոխանցվել գործադիր իշխանության հանրապետական այլ մարմինների:

Երևանի տարածքը կազմում է 223 քկմ, բնակչությունը՝ 1075.1 հազ. մարդ:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիսարևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին՝ ծովի մակերևույթից 900-1200 մետր բարձրության վրա:

Երևանը վարչական սահմանով հարում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին:

Երևանը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն:

Ժամային գոտի՝ UTC+4

Հեռախոսային կոդ՝ +374 (10), +374 (60) +374 (11)

Փոստային ինդեքսներ՝ 0001-0099

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

Արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովման համար, սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևոր նշանակություն ունեցող Բազմաբնակարան բնակելի շենքի նախագծման ժամանակ կատարել օբյեկտի (շենքի) շինհրապարակի սեյսմիկ պարամետրերի գնահատում՝ գրունտների դինամիկ բնութագրերի և հաշվարկային արագացումների որոշում, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի կառուցումն ու շահագործումն իրականացնել համապատասխան ավարտված շինարարական օբյեկտների հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերին, ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի, Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետի, Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերության, Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթների) պարտադիր պահանջներին:»:

4.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

4.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

4.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- 1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.
- 2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ.
- 3) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.
- 4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները.
- 5) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.
- 6) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.
- 7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:
- 8) պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- 9) շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, որի տեխնիկական չափորոշիչները և հասանելիության պայմանները սահմանվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ:

4.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանը կնախատեսվի շինարարական հրապարակի տարածքում: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

4.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

4.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

• Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

• Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկողիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

• Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

• Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

4.3.5 Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջոցառումների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջոցառումները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

4.3.6 Աղմուկ և թրթռում

